ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

05 նոյեմբերի **2018 թվականի N** 134-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ ԲՓ 90 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ» ՍՊ ընկերության 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 98 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հուլիսի 2-ի թիվ Ֆ-220/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 2 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/277 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալտի՝ 1.X=4434218 Y=8514653, 2.X=4434281 Y=8514659, 3.X=4434324 Y=8514722, 4.X=4434375 Y=8514847, 5.X=4434306 Y=8515040, 6.X=4434217 Y=8515087, 7.X=4434031 Y=8514968, 8.X=4434030 Y=8514733, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 11 հա տեղամասում՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Կնքել երևակման տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների

արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

11/5/2018

X

VERIFIED OCSP 05-Nov-18 17:04:56 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118